



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



2019



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հիմնական ցուցանիշներ

- ՀՆԱ-ի իրական աճ՝ **7.6%**
- Արդյունաբերության ավելացված արժեքի աճ՝ **10.2%**
- Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի աճ՝ **12%**
  - խմիչքի արտադրության աճ՝ **15.4%**
  - հագուստի արտադրության աճ՝ **20.1%**
  - ծխախոտային արտադրատեսակների արտադրության աճ՝ **6.8%**
  - սննդամթերքի արտադրության աճ՝ **4.1%**
- Ապրանքների և ծառայությունների արտահանման աճ՝ **10.3%**
  - Կոնյակի արտահանման աճ՝ **26.4%**
  - Մրգային գինիների արտահանման աճ՝ **70.8%**
  - խաղողի գինու արտահանման աճ՝ **25.3%**
- Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճ՝ **9.1%**
- Չբոսաշրջության աճ՝ **14.7%** (գրոսաշրջիկների թիվը՝ 1 մլն 894 հազար 377 մարդ)
- Ներքին գրոսաշրջության աճ՝ **41.4%** (1.5 միլիոն մարդ)

## Կարևոր փաստաթղթեր

- ✚ Տնտեսության կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման համար ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մշակել է ոլորտային 5 ռազմավարություն.
  - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարություն
  - Արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարություն
  - Գործարար միջավայրի բարելավման ռազմավարություն
  - ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն
  - Հայաստանի գրոսաշրջության զարգացման 2020-2030թթ. ռազմավարությունՊատրաստվել է նաև չափազիտության ոլորտի արդիականացման վերաբերյալ ռազմավարական ծրագիր:
- ✚ 2019 թվականի ընթացքում ընդունվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը: Մշակվել են օրենքից բխող կարգավորումները: Օրենսդրական կարգավորումը նպատակ ունի խթանելու երկրում հանրային ենթակառուցվածքների բարելավումը, ստեղծելու Հայաստանում հաջողակ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի իրագործման, խթանման և կառավարման համար բարենպաստ օրենսդրական և ինստիտուցիոնալ միջավայր, որը կհամապատասխանի միջազգային լավագույն փորձին:
- ✚ ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել նաև օրենսդրական փոփոխություններ՝ չորոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքների իրացման կամ դրոշմավորման կանոնների խախտումները ապաքրեականացնելու վերաբերյալ: Բարեփոխումը կապահովի տնտեսվարող սուբյեկտների և պետության ֆինանսական իրավաչափ շահերի հավասարակշռված պաշտպանությունը՝ դրական ազդեցություն ունենալով նաև քրեական օրենսգրքի բեռնաթափման և քրեադատավարական ռեսուրսների խնայողությունների տեսանկյունից:

- ✚ ՀՀ-ում լիզինգի՝ որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացման նպատակով մշակվել է իրավական ակտերի նախագծերի փաթեթ: Օրենսդրական բարեփոխումը դրական ազդեցությունն է ունենալու լիզինգային գործարքների ծավալների ավելացման, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար՝ հիմնական միջոցների նորացման և սարքավորումների արդիականացման հնարավորությունների ընդլայնման միջոցով:
- ✚ ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի հետ համատեղ աշխատանքների արդյունքում պատրաստվել է Հայաստանի ներդրումային քաղաքականության գեկույցը, որում դրական է գնահատվել Հայաստանի ներդրումային օրենսդրությունը, նշվել է մեկնարկած բարեփոխումների և համապատասխան մարմինների ինստիտուցիոնալ զարգացման շարունակականության անհրաժեշտության մասին, կատարվել են առաջարկություններ ներդրումների ու արտահանման լուրջ ներուժ ունեցող մի շարք ոլորտների զարգացման վերաբերյալ: Մշակվում է փաստաթղթից բխող միջոցառումների ծրագիր և բարեփոխումների ճանապարհային քարտեզ:
- ✚ Հաստատվել է Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է հստակեցնել այս ուղղությամբ տարվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Արդյունքում, կբարձրանա գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը, գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը և երկրի պարենային անվտանգության մակարդակը, ինչպես նաև կավելանա գյուղատնտեսության համախառն արտադրանքը:
- ✚ Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման, Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման, Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման, Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրերը, ինչպես նաև գործող ծրագրերում փոփոխություններն ու լրացումները:
- ✚ Մշակվել է Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը, որով նախատեսվում է 2020 թվականին համարակալել խոշոր եղջերավոր կենդանիների ամբողջ գլխաքանակը՝ շուրջ 800 հազ. գլուխ:

### **Գործարար եվ ներդրումային միջավայր**

- ✚ 2018-2019թթ. իրականացվել են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված գործարարության կարգավորման դաշտի բարելավմանը: Մասնավորապես, ըստ միջազգային գեկույցների գնահատականների՝ Հայաստանը վերջին տարիներին նշանակալի բարեփոխումներ է իրականացրել սեփականության գրանցման, հարկերի վճարման, արտաքին առևտրի և էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցին միացման ոլորտներում: Բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով՝ մշակվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2020-2023թթ. միջոցառումների ծրագիրը, որը ներառում է կարճաժամկետ և երկարաժամկետ աշխատանք պահանջող գործողություններ: Դրանց իրականացման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի զգալի բարելավում տեղի կունենա:
- ✚ Կարևորելով կորպորատիվ կառավարման սկզբունքների դերը մասնավոր հատվածի կայուն զարգացման գործում՝ տարվում են աշխատանքներ ՀՀ-ում կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրման ուղղությամբ: Ներկայումս վերանայվում է ՀՀ կորպորատիվ

կառավարման կանոնագիրքը, մշակված են համապատասխան ուղեցույցները, գնահատման չափորոշիչները, որին հաջորդելու են նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:

- ✚ Հայաստանի ներդրումային կարգավորումները բարձր են գնահատվել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից: 2019 թվականին Հայաստանը (առաջինը տարածաշրջանում) ներառվել է կազմակերպության օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսում՝ 70 երկրների շարքում գտնվելով առաջին տասնյակում:
- ✚ Հայաստանում ընթացող փոփոխությունների և գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մասին են վկայում նաև «Մուդիզ» և «Ֆիթչ» միջազգային վարկանիշային կազմակերպությունների գնահատականները: Վերջիններիս սանդղակներում Հայաստանը բարելավել է իր սուվերեն վարկանիշը՝ դառնալով համապատասխանաբար՝ B1-ից Ba3 և B+ից BB-: Հայաստանը բարելավել է դիրքերը նաև Գլոբալ մրցունակության, Legatum Prosperity Index-ի բարգավաճման զեկույցներում:
- ✚ Պոտենցիալ ներդրողների նախնական ուսումնասիրությունների հետ կապված ծախսերի կրճատման, արդյունավետության բարձրացման և ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով ստեղծվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը: Այն Հայաստանում ներդրումներ իրականացնելու մտադրություն ունեցող տեղական և օտարերկրյա գործարարներին տրամադրում է տեղեկատվություն և համալիր աջակցություն Հայաստանի ներդրումային հնարավորությունների և պայմանների, այդ թվում՝ պետական խթանների և այլ ընթացակարգերի վերաբերյալ:
- ✚ Շարունակվում են աշխատանքները գործարարներին աջակցող eRegulations Armenia նոր հարթակի ստեղծմանն ուղղությամբ: Հարթակը, որտեղ արդեն իսկ նկարագրված են ներդրողների կողմից առավելապես պահանջված 18 ընթացակարգերը: Այն ուղեցույց կծառայի Հայաստանում բիզնես սկսելու և ընդլայնելու մտադրություն ունեցող գործարարների համար:
- ✚ Օտարերկրյա ներդրումների ներգրավումը պահանջում է նաև զարգացած մտավոր սեփականության պահպանության քաղաքականություն: Այս ուղղությամբ 2019 թվականի ընթացքում ավարտին են հասցվել «Արդյունաբերական դիզայնի մասին», «Արտոնագրերի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 3 նոր օրենքների նախագծերի մշակումը, որոնք նպատակ ունեն մոտարկել գործող օրենսդրությունը միջազգային լավագույն փորձին:
- ✚ Մարաքեշի «Կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների հասանելիությունը դյուրացնելու մասին» և Պեկինի «Տեսալսողական կատարումների մասին» պայմանագրերին միանալու համար իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր գործողությունները: Պայմանագրերի վավերացման մասին ՀՀ օրենքների նախագծերը 2020 թվականի հունվար ամսին արժանացել են Կառավարության հավանությանը:
- ✚ 2019 թվականին զգալիորեն աճել է ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով ստացվել է 2722 հայտ, ինչը 26.5% -ով ավելի է նախորդ տարվա համեմատ: Գրանցվել են 1789 ապրանքային նշաններ, ինչը 23%-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: 2019 թվականին Մտավոր սեփականության գործակալություն ներկայացվել է 116 գյուտի և 37 օգտակար մոդելի հայտ, որոնցից 150-ը՝ ազգային, իսկ 3-ը՝ օտարերկրյա հայտատուներից (Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից և Իտալիայից): 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4772: 2019թ. ընթացքում գրանցվել է 100 գյուտ և 32 օգտակար մոդել:

## Արդյունաբերությունու Փոքր և միջին ձեռներեցության աջակցություն

- ✚ 2019-ի թ. ընթացքում հավանության է արժանացել 57 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը 212 մլրդ դրամ է: Դրա շրջանակներում տրամադրվել է 14.8 մլրդ դրամի մաքսատուրքից ազատման արտոնություն: Նախատեսվում է 3320 աշխատատեղերի ստեղծում: 13 ծրագրերի տրվել են նաև ավելացված արժեքի հարկը հետաձգելու արտոնություն, ԱԱՀ-ի հետաձգման գումարները կազմել են 10.1 մլրդ դրամ:
- ✚ Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության պետական աջակցության ծրագրի իրականացման շրջանակում շուրջ 300 արդյունաբերական կազմակերպություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրական է ազդել այդ ընկերությունների արտահանման և արտադրության ծավալների աճի վրա:
- ✚ Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ հայկական ընկերությունները մասնակցել են 5 միջազգային ոլորտային ցուցահանդեսների՝ կենցաղային տեխնիկայի, սննդի վերամշակման, կոշիկի արտադրության, ոսկերչության ոլորտներում: Արդյունքում կնքվել են շուրջ 371.4 մլն ՀՀ դրամի չափով արտահանման պայմանագրեր:
- ✚ Հայաստանն ազգային տաղավարով մասնակցել է նաև Չինաստանի Շանհայ քաղաքում կազմակերպված Չինաստանի ներմուծման միջազգային 2-րդ ցուցահանդեսին, ինչպես նաև Պեկին ԷԶՍՊՈ-2019 այգեգործական համաշխարհային ցուցահանդեսին, որտեղ հայկական տաղավարը նվաճել է Պեկինի համաշխարհային ցուցահանդեսի ոսկե մեդալը:
- ✚ Հայկական գինեգործական 30 ընկերություններ ազգային միասնական տաղավարով մասնակցել են 9 միջազգային հեղինակավոր ցուցահանդեսի, ինչի արդյունքում ամրագրվել է արտահանման 200 նախնական պայմանավորվածություն:
- ✚ Իրականացվել է հայկական խաղողի սորտերի 420 նմուշի գենոֆոնդի ուսումնասիրություն, նոր սորտերի հայտնաբերում և 171 անձնագրավորված սորտ Armenian Vitis Database տեղեկատվական բազայում:
- ✚ Ստեղծվել է բիզնեսի պլանավորման, մեկնարկի, կառավարման և ընդլայման տեղեկատվական և խորհրդատվական առցանց հարթակ [www.isc.am](http://www.isc.am) հասցեով, որտեղ գործարարները կարող են գտնել ձեռնարկատիրությանն առնչվող ուսուցողական նյութեր և տեսանյութեր, ինչպես նաև ոլորտային բիզնես ուղեցույցներ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել տվյալ ոլորտում արտադրություն/ծառայություններ իրականացնելու հիմնական քայլերի, հիմնադրման և գործարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, շուկա մուտքի, դիրքավորման և գնային քաղաքականության վերաբերյալ:
- ✚ Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից կազմակերպվող «Հաջող սկիզբ» դասընթացներին մասնակցել են 364 սկսնակ գործարարներ, որոնցից 238-ը մշակել են իրատեսական գործարար ծրագրեր, 159-ը ներկայացվել են ֆինանսական աջակցության: Ծրագրի արդյունքում 2019 թվականի ընթացքում ստեղծվել են նոր 82 ՓՄՁ սուբյեկտներ:
- ✚ 2019 թվականին գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում համաձայնեցվել և մշակվել է սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրման նոր մեխանիզմ, ինչի արդյունքում կտրուկ կավելանա այս ուղղությամբ ՆԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության հնարավոր շահառուների քանակը, ինչպես նաև տրամադրվող վարկային երաշխավորությունների սահմանաչափը 5 մլն ՀՀ դրամից կավելանա մինչև 7 մլն ՀՀ դրամ:
- ✚ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» կողմից 2019 թվականին կնքված վկայագրերի ապահովագրական գումարները կազմել են 11,584,358,543 ՀՀ դրամ (ամբողջ 2018թ.-ի նկատմամբ աճը՝ 1.48 անգամ), իսկ հավաքագրված

ապահովագրավճարները՝ 112,543,619 ՀՀ դրամ (ամբողջ 2018թ.-ի նկատմամբ աճը՝ 1.49 անգամ):

- ✚ Ստեղծվել է բիզնեսի պլանավորման, մեկնարկի, կառավարման և ընդլայման տեղեկատվական և խորհրդատվական առցանց հարթակ [www.isc.am](http://www.isc.am) հասցեով, որտեղ գործարարները կարող են գտնել ձեռնարկատիրությանն առնչվող ուսուցողական նյութեր և տեսանյութեր, ինչպես նաև ոլորտային բիզնես ուղեցույցներ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել տվյալ ոլորտում արտադրություն/ծառայություններ իրականացնելու հիմնական քայլերի, հիմնադրման և գործարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, շուկա մուտքի, դիրքավորման և գնային քաղաքականության վերաբերյալ:
- ✚ «Հաջող սկիզբ» դասընթացներին մասնակցել են 364 սկսնակ գործարարներ, որոնցից 238-ը մշակել են իրատեսական գործարար ծրագրեր, 159-ը ներկայացվել են ֆինանսական աջակցության: Ծրագրի արդյունքում 2019 թվականի ընթացքում ստեղծվել են նոր 82 ՓՄՁ սուբյեկտներ:
- ✚ 2019 թվականին գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում համաձայնեցվել և մշակվել է սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրման նոր մեխանիզմ, ինչի արդյունքում կտրուկ կավելանա այս ուղղությամբ ՆԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության հնարավոր շահառուների քանակը, ինչպես նաև տրամադրվող վարկային երաշխավորությունների սահմանաչափը 5 մլն ՀՀ դրամից կավելանա մինչև 7 մլն ՀՀ դրամ:

### **Արտաքին առևտուր, միջազգային համագործակցություն**

- ✚ ԵՄ «GSP+» ռեժիմի ներքո արտահանումներ իրականացնելու նպատակով REX համակարգում գրանցվել է 135 կազմակերպություն, որոնցից 100-ը՝ այս տարվա ընթացքում. (արտադրատեսակներ՝ պահածոներ, ալկոհոլային խմիչքներ, տեքստիլ արտադրանք, թանկարժեք քարեր և զարդեր, բնական և գազավորված ջրեր, մեղր, չորացրած մրգեր և բանջարեղեն և այլն): Համակարգում գրանցվելու ընթացակարգի վերաբերյալ պատրաստվել է տեսաուղեցույց, որը տեղադրված է Նախարարության կայքում և e-regulations հարթակում:
- ✚ Եվրոպական միության և ՎՁԵԲ-ի աջակցությամբ Հայաստանում մեկնարկել է առաջին մասնավոր բաժնեմասնակցային ներդրումային ֆոնդը, որը կառավարելու է «Ամբեր կապիտալ» միջազգային ներդրումային ընկերությունը: Փոնդը ներգրավելու է ընդհանուր 70 միլիոն եվրո՝ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրություններում ներդրումներ կատարելու համար՝ բարելավելով շահառու ՓՄՁ-ների մրցունակությունը՝ ներառյալ նաև կորպորատիվ կառավարման և թափանցիկության կատարելագործման միջոցով, այդպիսով խթանելով ՓՄՁ-ների միջազգայնացումը:
- ✚ Ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության և Սինգապուրի միջև ազատ առևտրի համաձայնագիրը, որով Սինգապուրը պարտավորություն է վերցնում չկիրառել ներմուծման մաքսատուրքեր ԵԱՏՄ անդամ պետությունների ծագում ունեցող բոլոր սպրանքների նկատմամբ: Ստորագրվել է նաև «Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագիրը, որն ազատականացնում է երկու երկրների միջև ծառայությունների առևտրի և ներդրումների իրականացման գործընթացները և նպաստում նոր շուկաների բացահայտմանը:
- ✚ Նախորդ տարվա հոկտեմբերի 25-ից ուժի մեջ է մտել նաև ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը: Այն հնարավորություն է տալիս նվազեցնել ԵԱՏՄ անդամ պետությունների և Չինաստանի տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու արգելքները, ինչպես նաև բարձրացնել կարգավորման թափանցիկությունը: Հոկտեմբերից ուժի մեջ է նաև ԵԱՏՄ-Իրան

ժամանակավոր համաձայնագիրը, որով նախատեսված է ԻԻՀ սակագնային պարտավորությունների նվազեցում մինչև գործող մաքսատուրքերի 75%-ի չափով:

- ✚ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի շրջանակներում ստորագրվեց ԵԱՏՍ անդամ երկրների և Սերբիայի միջև ազատ առևտրի գոտու մասին Համաձայնագիրը, որի հիմնական նպատակն է նոր առևտրային հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների շուկաների արտոնյալ պայմաններով հասանելիության ապահովումը:
- ✚ Հոկտեմբերի 25-ին հայկական կողմի աշխատանքների արդյունքում ոսկերչական արտադրանքի կրկնակի հարգադրոշումից խուսափելու նպատակով ստորագրվել է համապատասխան համաձայնագիր:

## Զբոսաշրջություն

- ✚ 2019 թվականի ընթացքում Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից Հայաստան են հրավիրվել ավելի քան 50 ՉԼՍ ներկայացուցիչներ և բլոգերներ տարբեր թիրախային շուկաներից, մասնավորապես՝ Ռուսաստանից, Գերմանիայից, Իտալիայից, Շվեյցարիայից, ԱՄՆ-ից, Լեհաստանից, Իսրայելից: Այցերի արդյունքում ապահովվել է Հայաստանի մասին պատրաստված տասնյութերի 5 միլիոնից ավելի դիտում և 50-ից ավելի հոդվածների հրատարակում:
- ✚ ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի Ապահովվել է Հայաստանի պաշտոնական տաղավարի ներկայությունը միջազգային 4 հեղինակավոր ցուցահանդեսներին («ITB Berlin 2019», «Top Resa – Փարիզ», «ITB-Asia Singapore», «WTM - London»):
- ✚ ՄԷԿՏ համակարգի օգնությամբ զբոսաշրջության վիճակագրությունը բարելավելու նպատակով մշակվում է համապատասխան համակարգչային ծրագիր, որը թույլ կտա ապահովել առավելագույն ճշգրտությամբ տվյալների ստացում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ:
- ✚ Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ ՀՀ մարզերում կազմակերպվել են առնվազն 5 ավանդական փառատոներ, որոնց ակտիվ մասնակցություն է ունեցել տեղի և հարակից համայնքների բնակչությունը, ներքին և ներգնա զբոսաշրջիկները:
- ✚ Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի շրջանակներում հաստատվել և իրականացվում են Հայաստանի 6 մարզերում զբոսաշրջային հիմնական ուղղություններ տանող ճանապարհների կամ զբոսաշրջավայրերին հարակից ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներ: Ավարտվել է շինարարությունը Գառնիի «Քարերի սիմֆոնիա», Ստեփանավի Դենդրոպարկի, Գյումրու Կոլմայրու փողոցի, դեպի Տաթևի վանական համալիր տանող ճանապարհի զբոսաշրջային հանգույցներում:
- ✚ Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքներն աշխարհում Հայաստանի ճանաչելիության, գրավչության բարձրացման և զբոսաշրջային վայրերի բարեկարգման ուղղությամբ: Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են 6 մարզերում զբոսաշրջային հիմնական ուղղություններ տանող ճանապարհների կամ զբոսաշրջավայրերին հարակից ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներ: Մասնավորապես, արդեն իսկ *ավարտվել են*
  - Տաթև համայնքի՝ դեպի Տաթևի վանական համալիր տանող 6000 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցումը,
  - Գյուլագարակ համայնքի՝ դեպի «Սոճուտ» դենդրոպարկ տանող 2800 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցումը,
  - Գյումրի համայնքի՝ «Կոլմայրի պատմական թաղամասի» 6 փողոցների վերականգնումը:

### Ընթացքում են՝

- դեպի «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձան տանող ճանապարհի վերականգնումը և հարակից տարածքի բարեկարգումը,
- Խոր Վիրապ վանքի տարածքի բարեկարգումը:

### Գյուղատնտեսության զարգացման պետական աջակցություն

- ✚ 2019 թվականի ընթացքում մեկնարկել կամ անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմքում դրված է գյուղատնտեսական գործունեության արդյունավետության, գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողի ֆինանսական բեռի թեթևացումը:
- ✚ 2019 թվականի ընթացքում գյուղատնտեսության աջակցության տարբեր ծրագրերի շրջանակում տրամադրվել է 5.5 մլրդ ՀՀ դրամ: 2019 թվականին գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուների թիվը կազմել է շուրջ 9300՝ ընդհանուր առմամբ տնտեսավարողների կողմից պետական աջակցության ծրագրերի օժանդակությամբ կատարվել է շուրջ 43 մլրդ դրամի ներդրում: 2018 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ շահառուների թիվն ավելացել է ավելի քան 1.6 անգամ, իսկ ներդրումները՝ շուրջ 1.8 անգամ:
- ✚ Մեկնարկել է 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակում ձեռք է բերվել 319 գլուխ կենդանի՝ 406 մլն. դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է 14.0 մլն. Դրամ:
- ✚ «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը, որի շրջանակներում տրամադրվել է հավաստագիր 104 քաղաքացու և կնքվել է փոխհատուցման 24 պայմանագիր:
- ✚ Մեկնարկել է 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիրը. ձեռք է բերվել 203 գլուխ կենդանի, տրամադրվել է 78.9 մլն դրամ արժեքով 1 միավոր վարկ: Այս ծրագրող վարկերը տրվում են 2%-ով, սահմանապահ գյուղերի բնակիչներին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 0%-ով:
- ✚ «Գյուղատնտեսության ոլորտի տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում 2019 թվականին տրամադրվել է շուրջ 8841 միավոր վարկ՝ 36.2 մլրդ. դրամի չափով: Նախորդ տարվա համեմատությամբ ծրագրից օգտվողների թիվը աճել է շուրջ 67 %-ով, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ շուրջ 65%-ով:
- ✚ Լրամշակվել և անհրաժեշտ փոփոխությունների է ենթարկվել «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ազրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը. հաստատվել է 91 հայտ 9.9 մլրդ դրամի չափով: Հաստատված հայտերի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է բերքի գնման 8994 պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 385.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ Ծրագրից օգտվողների թիվը ավելացել է շուրջ 59 տոկոսով, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ շուրջ 70 տոկոսով: Ծրագրի իրականացումը մրցակցային միջավայր է ստեղծել մթերումների դիմաց վճարումների առումով և վերջին տասնամյակի ընթացքում 1-ին անգամ մթերված պտուղ-բանջարեղենի և խաղողի արժեքը գյուղացիական տնտեսություններին ամբողջությամբ վճարվել է մինչև դեկտեմբերի վերջը:
- ✚ Լրամշակվել է Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիրը. տրամադրվել է 434.7 մլն դրամ գումարի 15 միավոր վարկ, 51.2 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 44.7 մլն դրամ և երկու շահառուի տրամադրվել է



փոխհատուցում 2 հա այգեհիմնման համար՝ 9.04 մլն. դրամ արժեքով: Նախորդ տարի ծրագիրը ունեցել է 2 շահառու, այս տարի՝ 17:

- ✚ Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագիրը ևս այս տարի լրամշակվել է. տրամադրվել է 4.6 մլն դրամ արժեքով վարկ:
- ✚ Լրամշակվել է «Ռոտզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիրը»: Ծրագրի շրջանակում վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման եղանակով տրամադրվել է 361.2 մլն դրամ գումարի 18 միավոր վարկ, 220.8 հա-ի ներդրման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 44.0 մլն դրամ, իսկ փոխհատուցման եղանակով 8 շահառուի 58.8 հա-ի ներդրման համար տրամադրել է 8.98 մլն դրամ: Ծրագրից օգտվողների թիվը ավելացել է շուրջ 2.3 անգամ, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ շուրջ 11.8 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:
- ✚ Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրում որոշակի փոփոխություններից հետո հաստատվել է 100 հայտ 2.6 մլրդ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 48.7 մլն դրամ: Միայն ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում ագրոպարենային ոլորտում կատարվել է շուրջ 2.9 մլրդ. դրամի ներդրումներ և ձեռք է բերվել 364 միավոր սարքավորում:
- ✚ Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրով 217 շահառուի տրամադրվել է 364 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 159 միավոր տրակտոր, 4 միավոր կոմբայն, 201 այլ տեխնիկա: Լիզինգի գումարը կազմել է 1.7 մլրդ. դրամ, սուբսիդավորման գումարը՝ 146.4 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ շուրջ 1.7 անգամ ավելացել է ինչպես լիզինգատուների, այնպես էլ տրամադրված գյուղատնտեսական տեխնիկայի թիվը:
- ✚ Հաշվետու տարում մշակվել և հաստատվել է գյուղողորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, որի համաձայն 2020 թվականի գյուղատնտեսական սեզոնի համար կապահովագրվի թվով 2 5 մշակաբույս, 3 ռիսկերից՝ կարկուտ և հրդեհ, զարնանային ցրտահարություն: Գարնանային ցրտահարության, կարկտահարության և հրդեհի ռիսկերից ապահովագրվում են ծիրանը, խաղողը և դեղձը: Ծիրանի և խաղողի հրդեհի և կարկտահարության ռիսկից ապահովագրությունը հասանելի է 6 մարզում (Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք, Վայոց ձոր, և Տավուշ): Միայն կարկուտից կամ հրդեհից ՀՀ բոլոր մարզերում ապահովագրվում են խնձորը, աշնանացան/զարնանացան ցորենը և գարին: Խաղողի և ծիրանի ապահովագրությունը զարնանային ցրտահարությունից դեռևս հասանելի է միայն Արարատի և Արմավիրի մարզերում:
- ✚ 2019 թվականին Հանրապետությունից արտահանվել է շուրջ 142.9 հազար տոննա թարմ պտուղբանջարեղեն, որից՝ 92.9 հազար տոննա պտուղ և 50 տոննա բանջարեղեն: 2019 թվականին պտուղբանջարեղեն մշակող 45 և խաղող մշակող 58 ընկերությունների կողմից ընդհանուր առմամբ մթերվել է շուրջ 251.2 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող (շուրջ 36.1 մլրդ. դրամի), որից՝ 62.5 հազար տոննա բանջարեղեն, 25.3 հազար տոննա պտուղ և 163.4 հազար տոննա խաղող: Մթերված պտուղբանջարեղենի և խաղողի ծավալները 62.5 հազար տոննայով կամ 24.9 տոկոսով գերազանցում են նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում, եթե 2018 թվականին խաղողի մթերման 1կգ-ի միջին գինը 154.4 դրամ էր, ապա 2019 թվականին այն կազմել է 158.4 դրամ:
- ✚ Հայաստանում գյուղատնտեսական հողերի չօգտագործման խնդիրը լուծելու նպատակով «Հողերի գլոբալ գործընկերության 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող հողերի կայուն կառավարման խթանմանը աջակցություն» ծրագրի շրջանակում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ու ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև ստորագրվել է ծրագրային փաստաթուղթ, համաձայն որի նախատեսվում է «Հողերի գլոբալ գործընկերության 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող հողերի կայուն կառավարման

խթանմանը աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային և հողագիտական քարտեզների թվայնացում: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2020 թվականին:

- ✚ Հողերի չօգտագործման խնդիրների նոր իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի կազմավորման, ինչպես նաև հողերի կառավարման գործիքակազմի ձևավորման՝ հողային բանկերի ստեղծման միջոցով հողի շուկայի զարգացման նպատակով 2019 թվականի նոյեմբերի 27-ին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ու ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջև կնքվել է 279 000 ԱՄՆ դոլարի տեխնիկական համագործակցության հուշագիր: